ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ., Փաստարկման հիմնահարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում, Ե., «Գիտություն» հրատ., 2005, էջ 325:

Հ. Հովհաննիսյանի մենագրությունը կամրջում է միջազգային և ազգային փաստարկման դպրոցները՝ փիլիսոփայության պատմության և արդի զարգացումների առումով: Աշխատությունը, պատկանելով փիլիսոփայության պատմագիտական ասպարեզին, աչքի է ընկնում աղբյուրագիտական հենքով և արդի հետազոտություններում արտացոլված տեսական մտքերի քննարկմամբ:

Աշխատության մեթոդաբանությունը խարսխված է երկու հիմնարար՝ իմացաբանական և սոցիալական սկզբունքների համադրության վրա: Եթե հին և վաղ միջնադարյան գիտությունը զարգանում էին իմաստասիրական հասկացությունների համակարգում, ապա նոր և նորագույն ժամանակների գիտությունը իր բազմաճյուղայնությամբ և բազմաբնույթ տարրերով, որպես բնական օրենքների ճանաչողության բնագավառ, տեսական ընդհանրացումների մակարդակում օգտվում է փիլիսոփայության զինանոցից:

Հեղինակը, հենվելով փաստարկման տեսության երևանյան դպրոցի հիմնադիր և ղեկավար ակադ. Գևորգ Բրուտյանի հետազոտությունների վրա, նշել է, որ փաստարկման հարցերի նկատմամբ հետաքրքրությունն իմացաբանական տեսանկյունից բացատրվում է նրանով, որ այն ստեղծվում է տարբեր գիտությունների զարգացման խաչուղիներում:

Սոցիալական տեսանկյունից փաստարկման գիտական հետաքրքրության մեծացումը հեղինակը բացատրում է արդի ժամանակներում մարդկանց գիտակցության մեջ ամրապնդվող՝ երկխոսության ճանապարհով քաղաքական և սոցիալական հարցերի լուծման մտածողությամբ: Եվ արդեն իսկ որպես բնաբան հնչող Գ. Բրուտյանի միտքը՝ «Ոչ թե ուժի փաստարկմամբ, այլ փաստարկման ուժով», կարող է հիմք ծառայել տեսական մշակումների համար այնպիսի լայն ասպարեզում, ինչպիսին է մշակույթների և քաղաքակրթությունների երկխոսությունը:

Հետազոտողը, իր աշխատության առանցքում դնելով հայ միջնադարյան հանճարեղ մտածողների՝ Եզնիկ Կողբացու (V դ.), Դավիթ Անհաղթի (V-VI դդ.) և Գրիգոր Տաթևացու (XIV-XV դդ.) փիլիսոփայական հայացքները և դրանց միջից քաղելով փաստարկման տեսության պատմությունը սնող մտքերը՝ կամրջել է ոչ միայն հայ մտքի տարբեր դարաշրջաններ փիլիսոփայական զարգացումները, այլև, հետևելով Գ. Բրուտյանի՝ հայ տրամաբանական մտքի ակունքների մասին առաջադրած դրույթին՝ «Տրամաբանության պրոբլեմների վերլուծման բարձր մասնագիտական մակարդակը, հարցադրումները և նրանց լուծումը խոսում են այն մասին, որ Դավիթ Անհաղթը ունեցել է իր տրամաբան-նախնիները, որ հայ իրականության մեջ մինչև Դավիթ Անհաղթը տրամաբանության գիտությունն արդեն ունեցել է իր ավանդույթները», փաստարկման խնդիրների տեսական մշակումը դիտել է լայն հենքի վրա՝ համակողմանիորեն դիմելով խնդրո առարկա հարցերի պատմությանը, դարերի միջից եկող արժեքների իմաստավորմանը և ժառանգաբար փոխանցված արժեքների կիրառմանը արդի ըմբռնումների հայեցակարգային մշակումներում:

Հ. Հովհաննիսյանը կարևորել է փաստարկման պատմության վերաբերյալ ընդհանրական աշխատությունների հրապարակման խնդիրը, որոնցում ընդգրկված կլինեն փաստարկման խնդրակարգին առնչվող հայ փիլիսոփայական մտքի շերտերը: Հենց իր աշխատությունն էլ նվիրված է այդ խնդրին: Հեղինակը

նման հարցադրում առաջադրելիս մեծ պատասխանատվություն է ցուցաբերել հայոց գիտական ժառանգության նկատմամբ, քանզի, ինչպես ինքն է նշել, միջազգային ասպարեզում կան տրամաբանության պատմությանը նվիրված հետազոտություններ, որոնցում միայն հարևանցիորեն է շոշափված միջնադարյան Հայաստանում տրամաբանական հետազոտությունների առկայության հիմնահարցը: Իսկ նման մակերեսային մոտեցումը, ինչպես նշել են ակադ. Գ. Բրուտյանը և ակադ. Ս. Արևշատյանը, վնասում է տրամաբանական ուսմունքների համաշխարհային պատմության ուսումնասիրության գործին:

Հայ ընթերցողի դատին է ներկայացված մի աշխատություն, որը հարըստացնում է հայ փիլիսոփայական մտքի կարևորագույն բնագավառի՝ փաստարկման տեսության հետազոտության ասպարեզը: Լուսաբանելով միջնադարյան հայ մտածողների երկերում եղած, փաստարկման ուսմունքին վերաբերող համապատասխան նյութերը՝ համակարգված և ամբողջական կերպով, քննական վերլուծությամբ հեղինակը փաստարկման ուսմունքի պատմության կարևոր փուլերի բացահայտմամբ լուծել է իր առջև դրված խնդիրը՝ եզրակացնելով, որ «փաստարկման հարցերը հարուստ ավանդույթներ ունեն հայ փիլիսոփայության պատմության մեջ և միևնույն ժամանակ վկայում են, որ Եզնիկ Կողբացին, Դավիթ Անհաղթը և Գրիգոր Տաթևացին հայ իրականության մեջ ունեցել են իրենց գաղափարական և՛ նախորդները, և՛ հաջորդները, և որ նրանց երկերում փաստարկման խնդիրների վերհանումը չի սպառում ու չի սահմանափակում հայ փաստարկման ուսմունքների պատմության ուսումնասիրությունը, և որ հայ փիլիսոփայության պատմության մյուս կարկառուն դեմքերի տեսական ժառանգությունը կարող է հետազոտության նյութ դառնալ փաստարկման տեսությամբ և պատմությամբ հետաքրքրվող այլ հետազոտողների համար» (էջ 321):

Հարկ է նշել, որ տվյալ մենագրությունը երկար տարիների համառ աշխատանքի արդյունք է: Հեղինակի ինչպես թեկնածուական ատենախոսությունը, այնպես էլ դրան հաջորդող հրատարակված բազմաթիվ գործերը նվիրված են գրախոսվող գրքի մեջ արծարծված խնդիրներին: Դրանք հրատարակված են ոչ միայն Հայաստանում, այլ նաև արտասահմանյան մի շարք երկրներում (Բուլղարիա, Հոլանդիա, Գերմանիա, Ֆրանսիա, Հունաստան): Ավելացնենք նաև, որ գրախոսվող աշխատությունը՝ «Փաստարկման հիմնահարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում», մենագրության առաջին գիրքն է, և ընթերցողը, հուսով ենք, դեռ հնարավորություն կունենա առաջիկայում ծանոթանալու նաև երկրորդ գրքին: Հարկ է նշել նաև, որ իր հետազոտական ու կազմակերպական աշխատանքի շնորհիվ հեղինակը, Փաստարկման միջազգային ինստիտուտի հիմնադրումից (Երևան, 1991) սկսած, եղել է ինստիտուտի գիտական քարտուղարը, իսկ 2004 թ. ինստիտուտը Ամստերդամ (Հոլանդիա) տեղափոխվելուց հետո ընտրվել է ինստիտուտի փոխնախագահ (տե՛ս *News and Views,* 2005, N 5, էջ 25):

Հ. Հովհաննիսյանի մենագրության արժեքը ոչ միայն գիտական խնդրի լուծմամբ է որոշվում, այլև պատասխանատվության այն բարձր գիտակցությամբ, որ իր գրքով ոչ թե ավարտվում է խնդրի լուծումը, այլ միայն նոր է սկսվում, քանզի, ինչպես ինքն է նշում. «Ճշմարտության ծնունդը, դրա հաստատումն ու այն ուրիշների համոզմունքը» դարձնելը գործընթաց են (էջ 318):

ԴԱՆԻԵԼՅԱՆ Է. Լ.
Պատմական գիտությունների դոկտոր